ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 1 (6), 1941 թ. Երևան

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ

1

Հովսեփ Էմինը հայ լուսավորիչների սերնդի առաջին խոշոր ներկայացուցիչն է։ Նա միաժամանակ 18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ամենափայլուն դեմքերից մեկն է։ Նրա դերը չափազանց մեծ է ինչպես հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման, այնպես էլ հայ ազատագրական շարժումների պատմության մեջ։

Հակաֆեոդալական, բուրժուա-դեմոկրատական գաղափարախոսությունը հայ իրականության մեջ սկիզբ է առնում 18-րդ դարի 50—60-ական թվականներից։ Հայ լուսավորական այդ իդեոլոգիան, սակայն, ծնունդ առավ ու ձևավորվեց ոչ թե Հայաստանում, որը 18-րդ դարում գտնվում էր խիստ հետամնաց սուլթանական Թյուրքիայի և շահա-խանական Իրանի (Պարսկաստանի) բիրտ ու դաժան տիրապետության տակ, այլ հնդկահայ դաղութում, որն անհամեմատ ավելի բարենպաստ նախապայմաններ ուներ առաջավոր գաղափարախոսության ստեղծման ու ձևավորման համար, քան բուն Հայաստանը։ Հայ լուսավորական, բուրժուա-դեմոկրատական գաղափարախոսությունը ձևավորվեց եվրոպական, մասնավորապես անգլիական առաջավոր մտքի ու հոսանքների ազդեցության տակ և 18-րդ դարի երկրորդ կեսում տվեց երեք նշանավոր լուսավորիչներ՝ Հովսեփ Էմին, Մովսես Խաղրամյան և Շահամիր Շահամիրյան։

18-րդ դարի երկրորդ կեսի հայ լուսավորական իդեոլոգիան ուներ քաղաքական, ռևոլուցիոն պայքարի շեշտված բովանդակություն։ Առաջնահերթ հարցն այդ շրջանում հայ ժողովրդի ազատագրության խնդիրն էր, որը պետք է լուծվեր սուլթանական և շահական բռնապետությունների լուծը ապստամբությամբ թոթափելու միջոցով։ Այս կարևոր հանգամանքն իր խոր կնիքը դրեց հայ լուսավորական գաղափարախոսության վրա։ 18-րդ դարի երկրորդ կեսի հայ լուսավորիչները միաժամանակ և քաղաքական գործիչներ, ազգային ազատագրական շարժման խոշոր ներկայացուցիչներ էին։ Հովսեփ Էմինը, օրինակ, ոչ միայն նոր, լուսավորական գաղափարների սոսկ քարոզող էր, այլև հայ ազատագրական շարժման պրակտիկ գործիչ։

Հովսեփ Էմինը՝ հայ հասարակական մտքի և ազատագրական շարժման այդ կարկառուն դեմքը՝ դժբախտաբար մինչև օրս չի դարձել գիտական ուսումնասիրության առարկա։ Նա մոռացության է մատնվել ոչ միայն մինչմարքսիստական, այլև մարքսիստական պատմագրության կողմից։ Էմինի

մասին գրականության մեջ կարելի է գտնել միայն աննշան և պատահական հիշատակություններ։ Այսպես, օրինակ՝ Էմինի մասին հիշվում է Փարիզում լույս տեսած «Մասյաց աղավնի» հանդեսում։ Գաբրիել վարդապետ Այվազովսկու խմբագրությամբ հրատարակվող այդ պարբերականի 1856 թ. համարում (էջ 269—271) զետեղված է Սահականնոս Պալասանյանի «Հովսեփ Էմին և Էդմոնդ Պըրք» խորագիրը կրող հոդվածը, որտեղ անգլիական աղբյուրներից թարգմանարար բերվում են մի քանի տեղեկություններ Էմինի և նրա անգլիացի բարեկամ Բըրքի փոխհարաբերությունների մասին։ Այնուհետև մի փոքրիկ հիշատակություն Էմինի մասին կա Բուտկովի «Материалы для новой истории Кавказа» աշխատության երկրորդ հատորում (էջ 141), որտեղ շատ թեթևակի հիշվում է այն մասին, թե հայազգի Էմինը 1760 թ. Անգլիայից եկել է Պետերբուրգ և այնտեղից էլ անցել է Կովկաս իր հայրենակիցների ազատագրությունը կազմակերպելու, բայց անհաջողություն գտնելով, անցել է Հնդկաստան և այնտել էլ մահացել է։ Էմինի մասին հիշատակություն է անում նաև «Փորձ»-ը։ Այդ հանդեսի 1877 թ. երկրորդ համարում զետեղված է Ա. Երիցյանի «Հայերի մասնակցությունը Ռուսաստանի՝ Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ» հոդվածը, որտեղ Էմինի մասին կրկնվում է այն, ինչ որ կա Բուտկովի աշխատության մեջ։ Էմինի մասին, համեմատարար ավելի մանրամասն խոսում է Լեոն (տես «Մուրճ», 1903 թ. № 11—«Հայոց գրականությունը 18-րդ դարում» հոդվածը և «Հայոց պատմություն», նորագույն շրջան, մասն Ա, ապակետիպ, 1926 թ.)։ Էմինի մասին հիշատակություն ունի նաև Մ. Բարխուդարյանը («Աղվանից պատմություն», հատ. Բ, 1907 թ.) և այլն։

Հովսեփ Էմինի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու համար հիմնական աղբյուրն առայժմ հանդիսանում է նրա «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» (Life and Adventures of Ioseph Emin) ինքնակենսագրական աշխատությունը։ Էմինի այդ ինքնակենսագրության առաջին հրատարակությունը կատարվել է նրա կենդանության ժամանակ, 1792 թվին Լոնդոնում, անգլերեն լեզվով։ Առաջին հրատարակությունն ունեցել է ընդամենը 200 օրինակ։ Երկրորդ հրատարակությունը կատարվել է 1818 թ. Կալկաթայում, դարձյալ անգլերեն լեզվով։ Երկրորդ հրատարակությունը, որ լույս է տեսել Էմի Արդարի խմբագրությամբ, ունի ծանոթություններ, լրացումներ և հավելված, որտեղ տրվում են Էմինի կյանքը լուսաբանող մի շարք նամակներ։ Էմինի այս չափազանց արժեքավոր աշխատության հայերեն թարգմանությունը մինչև վերջին ժամանակներս չի կատարվել։ Վերջերս միայն՝ 1940 թվի ընթացքում, Արմենիայի Պատմության և նյութական կուլտուրայի Ինստիտուտի ջանքերով, այդ գործը թարգմանվել է հայերեն (թարգմանվում է նաև ռուսերեն) և արդեն պատրաստ է հրատարակության։

Էմինի կյանքի և գործունեության վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան նրա անգլիացի բարեկամների նամակագրություններում և նրան ծանոթ անգլիացի հասարակական-քաղաքական գործիչների մասին հրատարակված կենսագրականներում (տես, օրինակ՝ *E. Y. Climenson* — „Letters of Elizabeth Montaqu“, *Prior*—„Life of Edmund Burke“, *Teignmouth*—

„Life of sir William Yones“ և այլն)։ Էմինի մասին արժեքավոր տեղեկություններ են տալիս նաև ցարական կառավարության արտաքին գործերի կոլեգիայի արխիվային նյութերը և Էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցու ձեռագիր, դեռևս չհրատարակված նամակները։ Էմինի հիշատակը հիշեցնող միակ նյութական մնացորդը դա Կալկաթայի հայոց եկեղեցու գավթում տեղավորված նրա գերեզմանն է։ Շատ ընորոշ է, որ գերեզմանաքարի վրա նրա անվան մակագրության հետ միասին նկարված են թմբուկ և թնդանոթ։

2



ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ (1726—1809)

Հովսեփ Էմինը ծրնվել է 1726 թվին, Իրանի (Պարսկաստանի) Համադան քաղաքում։ Նրա նախնիները 17-րդ դարի սկզբին, Արարատյան դաշտի հայ բնակչությունը Շահ-Արասի կողմից բռնի կերպով տեղահանվելու ժամանակ, գաղթեցին Հայաստանից և բնակություն հաստատեցին Համադանում։ Էմինի հայրը, որ վաճառական էր Պարսկաստանում, անհաջողությունների հանդիպելով, գնում է Հնդկաստան՝ Կալկաթա քաղաքը և այնտեղ շարունակում իր զբաղմունքը՝ վաճառականությունը։ Պատանի Հովսեփը նույնպես գնում է Կալկաթա և մասնակցում հոր առևտրական գործարքներին։ Կալկաթայում Էմինը շփվում է անգլիական շրջանների հետ, սովորում է անգլերեն և սկսում է կարդալ երոպական գրականություն։ Երիտասարդ Էմինի մեջ շուտով ծագում են գիտություն ձեռք բերելու և հայրենիքին ծառայելու դաղափարները։ Էմինի մեջ հատկապես խիստ ցանկություն է առաջանում գնալ Անգլիա, սովորել զինվորական արվեստը, որպեսզի կարողանա ծառայել իր հայրենիքի աղատագրության գործին։ 1751

թվի փետրվար ամսին, հակառակ հոր կամքին, նա անգլիական մի նավով Կալկաթայից ճանապարհ է ընկնում և, վեց ամիս տևող նավագնացությունից հետո, հասնում է Անգլիա։ Լոնդոնում Էմինը հանդիպում է մեծ դժվարությունների և զրկանքների։ Իր գոյությունը պահպանելու համար նա Լոնդոնում կատարում է զանազան սև աշխատանքներ—վարում է դռնապանի պաշտոն, ծառայում մանրավաճառի մոտ և այլն։ Իր անվերջ թափառումների ժամանակ Լոնդոնում Էմինը պատահաբար ծանոթանում է հայտնի անգլիական քաղաքական-դրական գործիչ Էդմոնդ Բըրքի հետ, որը և դառնում է նրա մտերիմ ու ազնիվ բարեկամներից մեկը։ Բազմաթիվ դժվարություններ կրելուց հետո, Էմինը անգլիացի իր ծանոթների, մասնավորապես լորդ Նորթամբերլանդի միջոցով ընդունվում է Լոնդոնի Վուլցիչի զինվորական ակադեմիան։ Իր կյանքի այս առաջին շրջանի մասին Էմինը անգլիացի իր ծանոթներից մեկին ուղղած մի նամակում գրում է.

«Ես ծնվել եմ Համադանում, որն այն վայրերից մեկն է, ուր իմ դժբախտ ազգը գերության մեջ է ապրում Շահ-Աբասից ի վեր։ Իմ հայրը, ինչպես և մյուս հայերը, ինձ սովորեցրել է միայն մայրենի լեզվով կարդալ-գրել, անգիր անել Սաղմոսն ու երգել եկեղեցում։ Բայց նա ինձ չսովորեցրեց զենք գործածել և ոչ էլ ինձ հրահրեց մեծ գործերի էությունը հասկանալու համար... Ես ճանապարհվեցի Գիլան, այնտեղից Իսպահան, Իսպահանից Բասրա և այնտեղից Կալկաթա, որտեղ իմ հայրը վաճառական էր և մտածում էր ինձ ես վաճառական դարձնել։ Սակայն ես պարզ տեսնում էի, թե ինչպես մեր ժողովուրդն արյուն-քրտինք էր թափում մի կտոր հացի համար և թե ինչպես, երբ նա մի քիչ դրամ էր հավաքում, անմիջապես կողոպտվում էր ստահոդ պատճառաբանություններով, երբեմն փաշաների, երբեմն խանների և երբեմն էլ հնդիկ իշխանների կողմից, որովհետև ձեռքին զենք չուներ։ Միաժամանակ՝ ես տեսնում էի, թե ինչպես եվրոպացի ժողովուրդները խելացի, ուժեղ են ու կռվում են կազմակերպված՝ մեկ մարդու պես։ Մտածեցի, որ եթե ես կարողանամ եվրոպացի զինվորականների նման լինել, կգնամ իմ հայրենակիցների՝ լեռնային Հայաստանի (այսինքն՝ Ղարաբաղի—Մ. Ն.) հայերի մոտ։ Ես լսել էի, թե նրանք երբեք չեն պարտվել, թե նրանք խիզախ ու քաջ մարդիկ են... Մտածում էի, որ եթե ես կարողանամ նրանց սովորեցնել զինվորական արվեստը, դա շատ օգտակար կլինի... Իմ այդ խորհրդածությունները հայտնեցի հորս, բայց նա երես դարձրեց ինձնից և նախատեց ինձ։ Ես չէի կարող տանել այդպիսի կյանք։ Ես փախա և իմ ճանապարհածախսի փոխարեն զանազան ծանր աշխատանքներ կատարեցի ամբողջ ճանապարհորդության ընթացքում՝ Բենգալիայից մինչև Լոնդոն։ Լոնդոնում մինչև փողերիս վերջանալը պ. Միդլենի ճեմարանում ես սովորում էի անգլերեն լեզու և գրականություն։ Բայց ես ստիպված եղա թողնել ուսումս և աշխատել մի կտոր հացի համար։ Օտար երկրում, առանց բարեկամների ու դրամի, ես շատ զրկանքներ կրեցի ու տառապեցի։ Սիտիում բեռնակիր եղա... Ուղիղ երկու տարի ես այդտեղ ծանր բեռներ էի կրում։ Իմ աշխատավարձից հատկացրի մի քիչ երկրագործություն սովորելու և գրելու մեջ կատարելագործվելու համար։ Սկսեցի նաև ֆրանսե-

ըեն սովորել, բայց աշխատանքս խանգարվում էր։ Ես սկսեցի տատանվել, որովհետև ես ջանք էի թափում, բայց առանց հույսի։ Ես կորցրի իմ առողջությունը և վերջապես հարկադրվեցի թողնել այդ աշխատանքը։ Մի ծանոթ ինձ հանձնարարեց Ուերստոր անունով մի փաստաբանի։ Նրա մոտ ես ուսում-խմում էի, բայց հանգստություն չունեի, որովհետև ոչ ոք չէր նայում իմ վրա և ոչ ոք լույս չէր սփռում իմ ծրագրերն իրականացնելու գործում... Վերջապես ես ունեցա ծանոթներ, որոնք խորհուրդ տվին ինձ դիմել գնդապետ Գենդլոյին։ Այս վեհանձն պարոնը շատ ազնիվ վերաբերմունք ցույց տվեց իմ հանդեպ։ Սակայն նա ինձ ճանաչելուց կարճ ժամանակից հետո վախճանվեց։ Ես նորից ընկա իմ նախկին անձկության մեջ... Մտածում էի վերադառնալ դեպի թշվառ կուրություն և Հնդկաստանում կրկին մատնվելու ստրկության, երբ նախախնամությունը ուղարկեց ինձ իմ տիրոջը՝ լորդ Նորթբրուքին, որը դեռնից վեր բարձրացրեց ինձ»[1]։

Ակադեմիա մտնելուց հետո Էմինը մեծ եռանդով ու սիրով սկսում է ուսումնասիրել ռազմական գործը, որովհետև նա իր քաղաքական ծրագրերի իրականացումը կապում էր այդ գործի հետ։ Թե ինչ նպատակներով էր Էմինը գնացել Լոնդոն և ինչպիսի մեծ գնահատական էր տալիս նա ռազմական արվեստին, այդ երևում է հորը գրած նրա նամակի հետևյալ տողերից.

«Հարգելի հայրիկ։ Առաքինության որդին քաջությունն է, և քաջությունը չի կարող գոյություն ունենալ առանց առաքինության... Ի՞նչ ես մտածում, կարծում ես՝ թե ես եկել եմ այստեղ միայն անգլերեն լեզու սովորելու... Ո՛չ, ոչ, ես եկել եմ ռազմական արվեստը սովորելու, որը նախընտրելի է աշխարհիս բոլոր արվեստներից... Այս արվեստով է, որ մենք պետք է կռվենք քրիստոնյա ազգերի ջարդարարների ու թշնամիների դեմ... Մենք միշտ կոտորվելու ենք մեր թշնամիների կողմից, եթե մենք ձիգ ու ջանք չթափենք սովորելու այդ արվեստը։ Հայրիկ, ահա սրանք էին քո միակ որդու հեռանալու պատճառները. ոչ թե ցոփության և շվայտության համար, այլ արժանիք և իմաստություն ձեռք բերելու, աշխարհը ճանաչելու և ծառայություն մատուցելու իմ անպաշտպան հայ ազգին»[2]։

Էմինը, սակայն, ակադեմիան չվերջացրեց։ 1756 թվին սկսվեց Յոթնամյա պատերազմը։ Էմինը որպես կամավոր մտնում է սկզբում անգլիական, ապա գերմանական բանակը և մասնակցում պատերազմական գործողություններին ընդդեմ Ֆրանսիայի։ Պատերազմը վերջանալուց հետո նա Լոնդոն վերադարձավ և սկսեց կոնկրետ պլաններ կազմել ու պրակտիկ քայլեր անել Հայաստանի ազատագրության մասին կազմած իր ծրագրերն իրագործելու համար։ Լոնդոնում եղած ժամանակ նա արդեն ուներ մշակված քա-

---

[1] Տես „Life and Adventures of Joseph Emin". Second Edition. Calcutta. 1918, էջ 67—69։

Էմինի ինքնակենսագրական այս աշխատությունից քաղվածքներ բերում ենք ընկեր Մ. Մինասյանի թարգմանությամբ։

[2] Նույն տեղում, էջ 102—103։

դաքական մի ծրագիր, որի համաձայն պետք է համահայկական մի ընդհանուր ապստամբության միջոցով, զենքի ուժով ազատագրել ինչպես Պարսկահայաստանը, այնպես էլ Թյուրքահայաստանը օտարների լծից։ Հայ ժողովրդի ազատագրության գործը նա կապում էր Վրաստանից օգնություն ստանալու ակնկալության հետ։ Էմինն առանձնապես մեծ տեղ էր տալիս վրաց թագավոր Հերակլ Երկրորդին և իր հույսերը մեծ չափով կապում էր նրա հետ։ Դեռ Լոնդոնից նա Հերակլին մի նամակ է ուղարկում, որով մի շարք խորհուրդներ է տալիս նրան և խնդրում՝ իրեն, որպես սպայի, ծառայության մեջ վերցնի վրացական բանակում։ Հերակլին ուղղած իր այդ նամակում Էմինը, ի միջի այլոց, գրում էր.

«Ես կցանկանայի ծառայել ձեզ, որպես երոպական սպա, ե ըստ իմ համեստ կարողությունների՝ սովորեցնել ձեր զինվորներին կռվել երոպացիների նման... Ես կցանկանայի ձերդ մեծությանը տեղեկացնել, թե ինչպիսի միջոցներով է, որ երոպական ազգերն այնքան հաղթանակող և այնքան քաջ ռազմիկներ են լինում... Իմ նպատակն է՝ ձերդ մեծության մոտ ծառայության մտնել, միաժամանակ ինձ հետ բերել ամեն կարգի հմտությամբ օժտված մարդիկ ուժեղացնելու և վերակազմելու ձեր պետությունը երոպական պետությունների նման»[1]։

Մի շարք նախապատրաստական ձեռնարկումներից հետո, 1760 թ. Էմինը հոլանդական մի նավով ճանապարհ է ընկնում դեպի Հայաստան։ Նույն թվի վերջերին նա հասնում է Ալեքսանդրիա նավահանդիստը, որաեղից անցնում է Հալեբ և ապա՝ Հայաստան։ Էմինն այցելում է շատ հայ գյուղեր, ուսումնասիրում է այդ գյուղերը, տեղեկություններ է տալիս երոպական կարգերի և լուսավորության մասին, հորդորում է՝ չլսել հնազանդություն քարոզող հայ հոգևորականներին, զենք վերցնել՝ ապստամբելու և օտար լծից ազատվելու համար։ Հայ գյուղերից մեկում տեղի է ունենում հետևյալ էպիզոդը. Էմինը գյուղացիներին հարց է տալիս, թե ինչու նրանք ազատ չեն, ինչու չեն ապստամբում, ազատության չեն ձգտում։ Գյուղացիները պատասխանում են, թե՝ եկեղեցու «սուրբ հայրերը» իրենց սովորեցնում են հնազանդ լինել, չապստամբել, որովհետև հայերի ազատությունը իբր թե մյուս աշխարհում է լինելու։ Այս բացատրությունը լսելուց հետո Էմինը, դիմելով կրոնի, ավետարանի օգնությանը, սկսում է հակառակն ապացուցել։ Նա գյուղացիներին դիմում է հետևյալ խոսքերով.

«Դուք պետք է որ լսած լինեք Ֆրանգստանի (Եվրոպայի) քրիստոնյաների մասին. եթե նրանք ավետարանը հասկացած լինեին այնպես, ինչպես մեր սուրբ հայրերն են բացատրել ձեզ, ապա նրանք էլ մեզ նման, մահմեդականներին ստրուկ կդառնային։ Խաչակրությունը, ընդհակառակը, նշանակում է կռվել ու մեռնել. ով այդպես լինի, նա կժառանգե աստծու թագավորությունը և ոչ թե նրանք, ովքեր վարում են թույլ ու վախկոտ կյանք։ Դավթի Սաղմոսը վկայում է՝ «մի լինիք ձիու նման կամ ջորու նման, որի բերանը պետք է սանձ դրվի»։ Օրինակի համար, բանականու-

[1] „Life and Adventures of Ioseph Emin". Second Edition. Calcutta, 1918, էջ 109—113

թյուն ունեցող մարդը պետք է թույլ չտա, որ ինքն ուրիշների ստրուկը դառնա։ Նա նույնիսկ զգույշ պետք է լինի, որ իր կրոնակիցները չիշխեն իր վրա, որովհետև աստված բոլորին էլ հավասարապես ազատ է ստեղծել։ Ամեն մարդ հարգելի է, հակառակ դեպքում նա կենդանուց չի տարբերվի։ «Մարդը, որն իր պատիվը չի հասկանում, նման է կորսյալ մատնված կենդանու»[1]։

Շարունակելով իր ճանապարհորդությունը, Էմինը 1761 թվին հասնում է Էջմիածին, որտեղ այդ ժամանակ կաթողիկոս էր Հակոբ Շամախեցին։ Էջմիածնի վանքի միաբանության կողմից նա թշնամական վերաբերմունքի է արժանանում։ Համոզվելով, որ այդ տեսակ պայմաններում չի կարող իր ծրագրերը իրագործել, Էմինը իր եկած ճանապարհով վերադառնում է Անգլիա, որպեսզի նորից, այս անգամ արդեն հանձնարարականներով ու ավելի նախապատրաստված վերադառնա Հայաստան։ Այս անգամ Լոնդոնում նա հանդիպում է ութ ամիս և այդ ժամանակամիջոցում ծանոթանում է ռուսական դեսպան իշխան Գոլիցինի հետ, նրանից ստանում է համապատասխան հանձնարարականներ և 1761 թվականի հոկտեմբեր ամսին ճանապարհվում է Ռիգայի վրայով դեպի Պետերբուրգ։ Պետերբուրգում շնորհիվ հանձնարարական նամակների, նա տեսակցություն է ունենում բարձրաստիճան անձանց հետ, այդ թվում նաև կոմս Վորոնցովի ու այդ ժամանակ Պետերբուրգում գտնվող վրաց թագավոր Թեյմուրազի հետ։ Էմինի ծրագիրը հավանություն է գտնում. Ելիզավետա կայսրուհու մահվանից հետո ռուսական գահը բարձրացած Պետրոս Երրորդ կայսրը հանձնարարական նամակ է գրում և տալիս Էմինին՝ վրաց թագավոր Հերակլին ներկայացնելու համար։ Ահա այդ նամակը.

«Իշխան Հերակլին։ Տեր, նամակաբերս, Հովսեփ Էմին, մի հայ քրիստոնյա, ծնված է Պարսկաստանի Համադան քաղաքում, դաստիարակված է Անգլիայում և դինվորական արվեստի մեջ կատարելագործված է Գերմանիայում. իր վարքով արժանի է դարձել այդ հայտնի (անգլիական—Մ. Ն.) ազգության համակրանքին. լսելով ձեր հայտնի անունը, որոշել է դալ ձեզ մոտ և իր ծառայությունն առաջարկել ձեզ։ Լոնդոնի իր ազնվական բարեկամները և մեր կայսերական դեսպան իշխան Գոլիցինը հանձնարարական նամակներով նրան ուղարկել են մեզ մոտ։ Այստեղ գալուց հետո մենք հարմար համարեցինք նրան ներկայացնել ձեր հանգուցյալ հորը՝ Թեյմուրազ թագավորին, որը, տեսնելով նրան, շատ հետաքրքրվեց նրանով և խոստացավ նրան իր հետ տանել Վրաստան։ Իր մահից մի քանի օր առաջ նա ասաց, որ Էմինը ճանապարհվի Վրաստան՝ առանց ուշանալու։ Նա այդպես էլ անում է։ Իսկ եթե դուք չկամենաք նրան պահել ձեզ մոտ և կամ թե անհամաձայնություն ծագի ձեր և նրա մեջ, մենք խնդրում ենք, որ ամենավայելուչ կերպով նրան հետ ուղարկեք, մենք պատրաստ ենք մեծ հոգությամբ նրան մեր կայսերական ծառայության մեջ պահելու, քանի որ մեզ լավ հայտնի են նրա բնավորությունն ու լավ բարքը»[2]։

[1] Նույն տեղում, էջ 142։
[2] Նույն տեղում, էջ 180։

Հանձնարարական այս նամակով Էմինը 1762 թ. մարտ ամսին Պետերբուրգից, Մոսկվայի վրայով, ճանապարհվում է դեպի Աստրախան։ Աստրախանում Էմինը մնում է մի քանի ամիս, որից հետո, Անդրկովկաս անցնելու նպատակով, գնում է Ղզլար։ Այստեղ Էմինը հանդիպում է անհաջողություններ։ Սահմանապահ զորքերի գեներալ-հրամանատարը կասկածում է Էմինի անձնավորության վրա և թույլ չի տալիս նրան Անդրկովկաս անցնել։ Գեներալը Էմինին հետ է ուղարկում հատուկ հսկողությամբ։ 35 օրվա ճանապարհորդությունից հետո՝ Էմինը հասնում է Մոսկվա։ Այստեղ, Հովհաննես Լազարյանի միջոցով, նա տեսակցում է կոմս Վորոնցովին և իշխան Գոլիցինի հետ լինում է արտաքին գործերի գաղտնի կոլեգիայում։ Էմինը նորից շարադրում է իր ամբողջ ծրագիրը և մտադրությունը։ Էմինի ծրագիրը հայտնում են Եկատերինա Երկրորդ կայսրուհուն, որը հաճությամբ ընդունում է այն։ Անցագիր ձեռք բերելով և դրամական օժանդակություն ստանալով իր ծանոթներից, Էմինը 1763 թ. մարտ ամսին նորից ճանապարհվում է Անդրկովկաս։ 15 օր ճանապարհորդելուց հետո նա հասնում է Աստրախան և ապա, Ղզլարի վրայով, Թբիլիսի։

Էմինը Թբիլիսիում լավ ընդունելություն է գտնում։ Հերակլ թագավորը Էմինին հրավիրում է իր մոտ և մանրամասն խոսում նրա հետ։

Մի շարք գաղտնի տեսակցությունների ժամանակ Էմինը Հերակլին բացատրում է իր ծրագիրը, առաջարկում է անհապաղ զորք կազմակերպել, արշավել Արևմտյան Հայաստանի (Թյուրքահայաստանի) վրա, տապալել տաճկական ու պարսկական լուծը և հայ ու վրաց ժողովուրդներին ազատագրել այդ լծից։ Էմինն անհրաժեշտ է գտնում ստեղծել հայ-վրացական ամուր դաշինք, որովհետև, նրա կարծիքով, միայն այդ դեպքում հնարավոր է Վրաստանը և Հայաստանն ազատագրել օտար բռնապետություններից։ Էմինն ամեն կերպ փորձում էր համոզել Հերակլին, որպեսզի նա կազմակերպի այդ գործը և ապա թագավորի ազատ և միացյալ վրաց-հայկական պետությանը։ Միաժամանակ Էմինը Հերակլին խորհուրդ էր տալիս սաստել ազնվականությանը, մտածել ժողովրդի կարիքները բավարարելու մասին, դպրոցներ բաց անել, գիտություն-լուսավորություն տարածել, գինվորական արվեստը զարգացնել, օրինակ վերցնել եվրոպական (անգլիական) կարգերից և այլն։ Հերակլը, ինչպես պատմում է Էմինը՝ համաձայնում է այդ բոլոր առաջարկների հետ, սակայն միշտ կրկնում էր, թե այդ բոլորի համար փող է հարկավոր, իսկ ինքը փող չունի։

Էմինը մի քանի ամիս մնաց Թբիլիսիում, ապա ամառը, Հերակլի հետ միասին, անցկացրեց Կախեթիայում։ Վրաստանում եղած ժամանակ Էմինը նամակագրություն ուներ Մշո ս. Կարապետ վանքի վանահոր, Ղարարաղի մելիքների և այլոց հետ։ Էմինն իր նամակներով հորդորում էր նրանց աշխատել հայ ժողովրդի ազատագրության համար։ Հետաքրքրական է մասնավորապես այն, որ Էմինին Մուշից գրած նամակներում հավատացնում էին, թե Արևմտյան Հայաստանում կան բոլոր նախապայմանները հաղթական ապստամբության համար, թե արդեն ապստամբների մի խոշոր բանակ է կազմակերպվում և այլն։ Ահա այդ նամակներից մեկը, որ վանահայր Հովհաննեսը 1763 թվին գրել է Էմինին.

«Գրարերս՝ Մելիք Ստեփանը, որն այս տեղացի է, Հայաստանի Փյուրդիստան գավառից, բերում է Ձեզ այս նամակը։ Նրանից կստանաք 600 հնչուն ոսկի, Ձեր ճանապարհի չնչին ծախսերին հատկացնելու համար. և հնարավորության սահմաններում շտապեցրեք Ձեր դալը։ Խնդրեցեք իշխանին, աստուծո օրհնությամբ և իմ աղոթքով, որ Ձեզ տա քսան վրացի հեծյալ զինվոր, ի բավարարություն տեղվույս ժողովրդին և ի հավատացումն նրանց, որ Դուք նրա բարեկամն եք։ Եթե միության (խոսքը հայ-վրացական միության մասին է — Մ. Ն.) թշնամիները արգելք հանդիսանան նրան հավանություն տալու Ձեր պահանջին, ոչինչ, աստված արդարությունը կգործադրի Ձեր հանդեպ։ Բայց չհրաժարվեք ընդունելու վերոհիշյալ դումարը. վերցրեք այն և ծախսեցեք ըստ Ձեր ցանկության։ Իսկ երբ տեսնեք, որ իշխանն իր աջակցությունը չէ շնորհում Ձեզ, մի անհանգստանաք և մի մտածեք։ Ես ստացա Ձեր նամակը. Դուք գրել էիք այն դայլերի նենգամիտ գործունեության մասին, որոնք առերևույթս, մեր փրկչի աշակերտներն են ձեռնում, սակայն միշտ պատճառ են եղել մեր անմեղ ազգի անկման և որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ անհավատների ձեռքին գործիք։ Անցյալ տասնամեկ ամսվա ընթացքում ես զբաղված եմ եղել նամակագրությամբ, և շատ հեշտությամբ կարողացա ի նպաստ Ձեզ տրամադրել Ֆյուրքիայի բոլոր մեծամեծ հայերին, որ մտածեն նույն հերոսական ուղիի մասին... Ինչ վերաբերում է կռվող ուժին, վեց օր ճանապարհորդելուց հետո, Դուք կգտնեք Ձեզ դիմավորող 40.000 հոգու։ Ասորիներն ու եզիդի քյուրդերը նույնպես միանալու են մեզ։ Վրաստանի իշխանին չասեք՝ թե նրանք պետք է դրամ ստանան, որովհետև, որպեսզի ավելի հանգստացնեմ Ձեր միտքը — պետք է ասեմ, որ նրանք բոլորը երդվել են... որ իրենք Ձեր հրամանի տակ տասը տարի կռվելու են առանց որևէ դրամական ակնկալության, իսկ ինչ վերաբերում է սննդամթերքին և ռազմամթերքին, նրանք սեփական միջոցներով ապահովված են նաև այդ տեսակետից։ Թյուրքերը նույնը չեն, ինչ որ էին հարյուր տարի առաջ։ Առանց կռվելու, նրանք տեղի են տալու, և քանի որ նրանց քաղաքները ամրացված չեն, կարող եք գուշակել, թե ինչպես հեշտ է լինելու դրանց գրավումը։ Մի նախապաշարյալ մարդարեություն արմատացել է նրանց ուղեղում, թե իրենց գերիշխանության վախճանը մոտեցել է և թե անօգուտ կլինի քրիստոնյաների դեմ կռվելը։ Նրանք լսել են նույնպես, թե Դուք եկել եք ռուսական կայսրությունից, որի երանյալ կայսրուհու կողմից շատ ուժեղ կերպով հանձնարարվել եք Վրաստանի իշխանին, այնպես որ Թյուրքերը երբեք չեն համարձակվի քրիստոնեի արյուն թափելու։ Երեք տարի է անցել այն օրից, երբ Դուք, Մինչերկրականի վրայով, եկաք Անգլիայից և Ձեր անցած գյուղերում հորդորեցիք ժողովրդին։ Դրանից հետո ամեն մի հայ դիմել է զենքի, նույնիսկ կանայք պատրաստ են կռվելու, պայմանով, որ Հերակլը համաձայնի պաշտպանել Ձեզ։ Բավական է, ինչքան գրեցի։ Իսկ երբ Դուք հաջողություն չգտնեք Հերակլի մոտ, իմ հայրական խորհուրդն այն է, որ երբեք չհուսահատվեք, այլ շարունակեցեք Ձեր ամբողջ կորովով և ոչ մի վտանգից մի վախենաք, ապավինեցեք աստծուն. հաջողեք թե ոչ, Դուք համբավ կունենաք։ Բայց ես մեծ հույս ունեմ, որ Դուք պետք է լինեք Ձեր խեղճ ու ճնշված ազգակիցներին ստրկության

շղթաներից ու տառապանքից ազատագրողը։ Ես աղոթում եմ առ աստված, որ պահպանի և պաշտպանի Ձեզ ի փառս Հայաստանի»[1]։

Էմինի եռանդուն աշխատանքը և հորդորները, սակայն, արդյունք չունեցան։ 1763 թվին, Հակոբ Շամախեցի կաթողիկոսի մահվանից հետո, Էջմիածնի կաթողիկոսական դահի վրա նստեց Սիմեոն Երևանցին, որն սկզբից ևեթ խիստ թշնամական վերաբերմունք հանդես բերեց դեպի Էմինը և նրա իդեան։ Նոր կաթողիկոսը նամակներ գրեց Հերակլին, որոնց մեջ խիստ հարձակումներ էր գործում Էմինի վրա, նրան համարում էր վտանգավոր մարդ և խորհուրդ էր տալիս Հերակլին՝ նրան հեռացնել Վրաստանից։

1763 թ. վերջերին կամ 1764 թվի սկզբներին (ճիշտ դատան առայժմ հնարավոր չէ որոշել) Սիմեոն Երևանցին Հերակլին գրած իր նամակներից մեկում Էմինի մասին հետևյալն է ասում.

«Դարձյալ և զայս առանձինն ծանիցէ տէրութիւնդ, զի այդ մեր պարոնին մէկ երկու մարդ ունի, որք միշտ գան յայս կողմանս և համարձակ և բացաբերան խօսին զրանս անպատշաճս, զորս լուեալ հայք և տաճիկք, ոմանք ծաղր առնեն և ոմանք սրեն զլեզուս ի վերայ մեր։ Յայս միջոցիս, մէկ մահտեսի Գրիգոր մի ունի, եկն յԵրևան և աստ լրբաբար խօսելով կռուեալ է ընդ խանի մարդկանցն, և նոքա ևս գանեալ էին զնա և մերկացուցեալ, և զոր ինչ գրեանս ունէր, առեալ էին և տարեալ խանին, և այլոց ցույց տուեալ։ Բ գիր էր ունեցեալն՝ մէկն ի դմանէ և մէկն ի տէրութենէդ առ սուրբ Կարապետու Առաջնորդ Յոնան վարդապետն գրեցեալք։ Զորս տեսին ամենքեան։ Եւ առ մեզ ևս բերին և տեսաք որ քո կնիքն էր, և յոյժ զարմացաք։ Բայց մեք ստեցաք, ասելով թէ՝ կնիքդ հնարեցեալ է և ոչ է Վալուն (Հերակլին—Մ. Ն.) կնիքն. զայս ամենայն իմացան երկրացիքս և ի քաղաքէդ ևս շատ մարդիկք, և մանաւանդ Տէր Գարբրիէլն, որ եատես և լուաւ, այժմ կամիմ ասել Աղնուոյդ թէ՝ ևս ոչ պատշաճ տեսանեմ օրհնեալ անուան քոյ զքո գիրդ և քո կնիքդ այսպէս յիմարաց ձեռն անկանիլն, մանաւանդ ՀՊատս ունի և ոչ օգուտ։ Յառաւել սիրոյս գրեցի խնայելով ի պատիւ և յանուն արքայականի տէրութեանդ։ Յոնանն որքան մարդ է, որ դու նորա գիր գրիցես, վասն այդպիսոյ բանի, և զրատարն ևս այդպէս յիմար, որ ամենեցուն ցույց տայցէ պարծելով, խնդրեմ զի լաւապէս մտածեալ որոճայցես, և մանաւանդ զդա ևս զդաստացուսցես, զի գգիրն և զմարդիկս իւր յինքն ժողովեսցէ, և խոհեմութեամբ շարժիցէ, զի երկիրս այլազգոյ ձեռաց է, և մեք ի ձեռս սոցա կամք։ Գիտես զինչ ասեմ, ոչ միայն այս երկիր այլ և յամենայն տեղիս, ուր դտանին ազգ մեր։ Բանդի մեծ ցաւ ծնանի վերջապես ազգիս մերոյ որպէս երևի և զայլն Տէր Գարբրիէլն պատմեսցէ։ Ողջ լեր ի տէր ի փառս խաչին Քրիստոսի և ի պարծանս մեր»[2]։

---

[1] „Life and Adventures of Ioseph Emin". Second Edition. Calcutta, 1918, էջ 234—235։

[2] ՏԵՍ ՀՍՍՌ Կենտրոնական Ձեռագրատուն-Մատենադարան (Ձեռագրերի ուսումնասիրության գիտահետազոտական ինստիտուտ), ֆոնդ № 6, թղթապանակ № 2, էջ 8։

Սիմեոն կաթողիկոսի այս նամակը, որ մինչև այժմ մնացել էր անհայտ և հրատարակվում է առաջին անգամ, հաստատում է Էմինի ինքնակենսագրականում հաղորդված տեղեկությունների վավերականությունը, վերացնելով այն կասկածները, որոնք կարող էին

Սիմեոն կաթողիկոսի այս նամակից պարզորոշ երևում է, որ Էմինը, Թբիլիսիում եղած ժամանակ, լայն պրոպագանդա է մղել հօգուտ ապստամբության, հատուկ մարդիկ է ունեցել այդ նպատակի համար և սերտ կապ է հաստատել ս. Կարապետի վանահոր հետ։ Նամակից երևում է նաև, որ Հերակլը սկզբում համաձայնել է Էմինի ծրագրի հետ և նույնիսկ հովանավորել է նրան։ Սակայն հետագայում, Սիմեոն Երևանցու և ընդհանրապես հայ կղերականության հորդորներով, Հերակլը փոխում է իր վերաբերմունքը և Էմինին նորից արտաքսում է Վրաստանից։

Հուսախաբված և հուսալքված՝ Էմինը 1763 թվի վերջերին թողնում է Վրաստանը և անցնում Դաղստան։ Այնտեղ նա լավ ընդունելություն է գտնում լեռնաբնակ բնակչության (լեզգիների) մեջ և նույնիսկ ընտրվում է զորախմբի ղեկավար։ Մոտ երկու տարի Էմինը մնում է Դաղստանում և օգտագործելով իր դիրքը, կասեցնում է լեզգիների արշավանքները դեպի Վրաստան։

1766 թվին Էմինը լեզգիների հետ միասին գալով Գյանջա, իր ակտիվ միջամտություններով հայ գյուղերը փրկում է լեզգիների ասպատակություններից ու հայ գերիներին ազատում քրդերից։ 1766—1767 թվականներին Էմինը շրջում է Ղարաբաղում, լինում է հայ մելիքների մոտ և աշխատում է միություն առաջ բերել նրանց մեջ, փորձում է կազմակերպել մի հզոր բանակ և ընդհանրապես քարոզում է ազատագրական շարժման գաղափարը։ Էմինը մեծ հույսեր էր կապում Ղարաբաղի (Խամսայի) մելիքությունների հետ և կարծում էր, թե նրանք պետք է լինեն հայ ազատագրական շարժման կենտրոնական ուժը։ Սակայն Էմինը շուտով հիասթափվում է նաև նրանցից։ Հայ մելիքները ոչ միայն չեն ընդունում Էմինի ծրագիրը, այլև, դարձյալ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի պահանջով, իրենցից հեռացնում են հայ ազատագրական շարժման այդ փայլուն գործչին։ Այդպես է վարվում Էմինի հետ նաև Դանձասարի Հովհաննես կաթողիկոսը, որը, ի միջի այլոց, պատմում է Էմինին, թե այդ բոլորի պատճառը Սիմեոն Երևանցին է։

«Զգուշացիր նրա (Սիմեոն Երևանցու—Մ. Ն.) չարանենգ սրտից,— դիմում է Դանձասարի կաթողիկոսը Էմինին։ Մի դատապարտիր մեր գլխավորներին և ոչ էլ հայ ժողովրդին, որոնք իրենց բոլոր միջոցներով կսիանային քեզ և կենթարկվեին քո ղեկավարությանը, եթե միայն նա (Սիմեոնը—Մ. Ն.) չլիներ։ Հիշում ես մի տասնհինգ օր առաջ իմ սուրհանդակը բերեց մի նամակ՝ ուղղված Մելիք Յուսուֆին, երբ դու նրա մոտ էիր Գյուլիստանում... Դա Սիմեոնի սևիսական նամակն էր, որ ուղարկված էր ինձ իր սուրհանդակի միջոցով... Նա (Սիմեոնը—Մ. Ն.) ցանկություն էր հայտնում, որ ես իմ սուրհանդակի միջոցով այն ուղարկեմ Յուսուֆին և հրահանգեմ նրան, որ քեզ վտարե։ Նա միաժամանակ ուղարկել է ուրիշ չորս նամակ՝ ուղղված չորս մելիքներին, խորհուրդ տալով նրանց զգույշ լինել և չկապվել քո ձեռնարկումների հետ... Հակառակ պարագայում նորին սրբությունը սպառնում էր բանտարկել նրանց... Ունենալով այդպիսի մի հզոր

Ծագել այդ կապակցությամբ։ Սիմեոն Երևանցու նամակը, հենց այդ պատճառով էլ, պատմական կարևոր նշանակություն և մեծ արժեք է ստանում։

թշնամի... ինչպես հնար է, որ դու հաջողություն գտնես... մենք ոչ մի խոչընդոտ չունենք, բացի եկեղեցականներից, որոնք այժմ իրենց գլխին ունենալով Սիմեոնին, արգելք են հանդիսանում քեզ և պիտի խանգարեն քո բոլոր գովելի ծրագրերը։ Դուք պետք է համբերեք, որքան ժամանակ նա ապրում է։ Երբ նա հրաժեշտ տա այս անցավոր աշխարհին... այն ժամանակ մենք կարող ենք հույս ունենալ մեր ազատության համար»[1]։

Այս բոլոր անհաջողություններից հետո՝ Էմինը որոշում է վերադառնալ Ռուսաստան, բայց ճանապարհին, Շամախի քաղաքում, նա տեղեկություններ է ստանում այն մասին, որ Խոյի շրջանի ասորի քրիստոնյաները պատրաստ են իրեն (Էմինին) ընդունելու և ապստամբելու պարսկական տիրապետության դեմ։ Հավատալով այդ լուրերին և հույս ունենալով, որ ասորիների ազատագրությունը կարող է ազդանշան դառնալ հայ ազատագրական շարժման համար, Էմինը ճանապարհվում է դեպի Խոյ։ Բավական դժվարություններից հետո Էմինը հասնում է ասորական Խոսրով գյուղը և տեսակցում է ասորի Հովհաննես վարդապետի հետ։ Վերջինս սկզբում ողջունությամբ ընդունում է Էմինին, խոսք է տալիս ոտքի հանել բոլոր ասորիներին և այլն, բայց հետո, երբ իմանում է, որ Էմինը ոչ փող ունի և ոչ էլ Հերակլի օգնություն, հրաժարվում է իր բոլոր խոստումներից, հայտարարելով, որ առանց փողի և Հերակլի՝ ոչինչ չի կարելի անել։ Էմինը, հուսահատված, թողնում է Խոյը և վերադառնում Անդրկովկաս՝ Ռուսաստան ճանապարհվելու նպատակով։ Սակայն նոր դեպքերի և լուրերի ազդեցության տակ, Էմինը նորից գնում է Թբիլիսի, հույս ունենալով, որ այս անգամ կկարողանա համոզել վրաց թագավոր Հերակլին՝ իրագործելու իր ծրագիրը։ Հերակլն սկզբում դարձյալ լավ ընդունելություն է ցույց տալիս Էմինին, նույնիսկ ներողություն է խնդրում պատահածի համար և բացատրում է, թե Էմինին ամբաստանողները եղել են Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, Թբիլիսիի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը և վրացական մի քանի ազնվականներ։ Էմինը, այս ընդունելությունից խրախուսված, նորից մի քանի ամիս մնում է Թբիլիսիում, հուսալով, թե այս անգամ արդեն Հերակլը գործի կանցնի հայ և վրաց ժողովուրդների ազատագրության գործը գլուխ բերելու համար։ Սակայն այս անգամ ևս Էմինի հույսերն ի դերև ելան։ Հայ կղերի և մասնավորապես Էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցու խիստ ճնշման տակ Հերակլը նորից առաջարկում է Էմինին հեռանալ Թբիլիսիից։ Թողնելով Թբիլիսին, Էմինն անցնում է Իմերեթիա՝ Սողոմոն թագավորի օգնությանը դիմելու։ Իմերեթիայի թագավորը սիրով է ընդունում նրան և ըստ հարկի հյուրասիրում։ Էմինը, սակայն, շուտով նկատում է, որ Իմերեթիայի տերն ամբողջովին տարված է խնջույքներով և անընդունակ է իրագործելու որևէ քաղաքական ծրագիր։ Համոզվելով այդ բանում, Էմինը, առանց նույնիսկ իր նպատակները բացատրելու, հեռանում է Իմերեթիայից և Գորու—Թբիլիսիի վրայով անցնում է Գյանջա։ Ութ տարվա դեղերումներից հետո տեսնելով իր գործի անհաջողությունը, նա որոշում է ճանապարհվել դեպի Հնդկաստան, գնալ իր ընտանիքի մոտ։ 1768 թվին նա Գյանջայից անց-

[1] Տես—„Life and Adventures of Ioseph Emin", էջ 321—322.

նում է Շուշի և ապա Օրդուբադի ու Թավրիզի վրայով գնում է Բաղդադ, այնտեղից էլ, Բասրայի վրայով՝ Հնդկաստան։ Այդտեղ նա անգլիական բանակում ծառայում է որպես սպա։ 1771 թվին Էմինը տեղեկություն է ստանում, որ պատերազմ է սկսվել Ռուսաստանի և Թյուրքիայի միջև։ Գտնելով, որ հասել է իր ազատագրական ծրագիրն իրագործելու հարմար ժամանակը, նա պատրաստվում է նորից Ռուսաստան գնալ, բայց, Անգլիայի իր ծանոթների խորհրդով՝ հետ է կանգնում այդ մտադրությունից։ Մնալով Հնդկաստանում, Էմինը, սակայն, չի դադարում հայ ժողովրդի ազատագրության ծրագրի իրականացման ուղղությամբ գործելուց։ Նա շարունակում է ազատագրական շարժման դաղափարները տարածել հնդկահայերի մեջ։ 1772 թվին Էմինը Կալկաթայից գնում է Մադրաս, որտեղ հյուրընկալվում է Շահամիր Շահամիրյանի մոտ։ Էմինի հորդորներով՝ Մադրասի հայ վաճառականները (Շահամիրյան, Խոջաչանյան և ուրիշները) որոշում են տարեկան 12,000 ռուփի ուղարկել Հայաստան այնտեղ Էմինի գլխավորությամբ հայկական դնդեր կազմակերպելու համար։ Այդ որոշումը, սակայն, չի կիրառվում շնորհիվ Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի, որն այդ ժամանակ գտնվելով Մադրասում՝ խիստ թշնամական դիրք է բռնում և՛ Էմինի, և՛ նրա ծրագրի հանդեպ։ Շատ բնորոշ և հետաքրքրական է, որ Էմինը իր ինքնակենսագրականում մեծ համակրանքով և ոգևորությամբ է խոսում Շահամիր Շահամիրյանի մասին։ Պատմելով, թե ինչպես Հովհաննես եպիսկոպոսի ձնշման տակ Մադրասի բոլոր հայերն իրենից (Էմինից) երես դարձրեցին, նա գրում է.

«...Սուրբ հայր Հովհաննեսի պատճառով բոլոր հայերը լքել էին ինձ։ Միայն պարոն Շահամիրը շարունակեց լինել իմ բարեկամը և արհամարհեց այդ վանականին ու նրա վատասիրտ բոլոր հետևորդներին։ Նա (Շահամիրյանը—Մ. Ն.) պարզապես ցավում էր նրանց տգիտության վրա, որ խաբվում էին այդ խորամանկ և ցածրահոգի անձնավորությունից, անձնավորություն, որի գլխավոր ուսմունքն էր՝ խարդախությամբ չարիք սերմանել և կործանել իր հայրենակիցներին»[1]։

Իր ազատագրական ծրագիրն իրականացնելու նպատակով Էմինը՝ երկաթե կամք ունեցող այդ անխոնջ գործիչը՝ նորից անցնում է Պարսկաստան, բայց անհաջողությունների հանդիպելով՝ վերադառնում է Հնդկաստան։ Իր կյանքի վերջին շրջանում Էմինը հաստատվում է Կալկաթայում և այնտեղ էլ մահանում է 1809 թվին, խորը ծերության հասակում։

3.

Էմինի հասարակական-քաղաքական գործունեությունն ունի հայրենասիրական ու ժողովրդասիրական շեշտված բնույթ։ Ջերմեռանդ սեր դեպի հայրենիքը, դեպի իր ժողովուրդը, համառ պայքար, անձնազոհություն և նվիրվածություն հայրենիքի համար—ահա այն հիմնական գաղափարները, որոնք նա և՛ քարոզում, և՛ կիրառում է իր պրակտիկայի մեջ։ Հայրենիքին

[1] Նույն տեղում, էջ 446—447։

ծառայելու նպատակով նա դիտակցաբար կրել է ամեն տեսակի տառապանքներ և հաճախ նետվել է մեծագույն վտանգների մեջ։ 1756 թվին լորդ Նորթըմբերլանդին ուղղած իր նամակում Էմինը գրում էր.

«Ես շատ դեղեցիկ նպատակներ ունեմ, որոնց համար շատ տառապեցի։ Կարծում եմ, որ ձերդ պայծառափայլությունը չի արհամարհի մի անձնավորության... որն այդ նպատակների մասին ավելի շատ է մտածում, քան իր ապրուստի մասին։ Ես լքել եմ կյանքի շատ հանգիստ պայմաններ և ենթարկվել ներկայի ողորմելի դրությանը. բայց ես չեմ բողոքում, եթե միայն կարողանամ հասնել իմ նպատակին... Երբ հայրս ինձ տարավ Կալկաթա... ես տեսա երոպացիների զորքը և զինվորների մարդանքը, ինչպես նաև նավաբկությունը և թե ինչպես նրանք ճարտար ու կատարյալ են ամեն բանի մեջ։ Ես ողբում էի ...իմ կրոնի, իմ հայրենիքի համար, ես ողբում էի, որ մենք գերության մեջ ենք գտնվում, տգետ ենք և հրեաների նման թափառական... Ես որոշեցի գնալ Եվրոպա՝ սովորելու ռազմական արվեստն ու նրան օժանդակող գիտությունները. վստահ էի, որ եթե ես որպես մի երոպացի ոպա գնայի Հայաստան, ապա մեծ չափով օգտակար կլինեի իմ հայրենիքին... Հայրս չլսեց ինձ... Ես չէի կարող հանդուրժել անասնական կյանքը—ուտել, խմել առանց ազատության և գիտության... Ես դիմեցի նավապետ Ֆոքսին և հարյուր անգամ համբուրեցի նրա ձեռները, մինչև նա համաձայնեց, որ Եվրոպա հանապարհվելու իմ ծախսի փոխարեն աշխատեմ նավի վրա։ Զարաչար աշխատանքներ կատարերով՝ հասա Անգլիա. այդ ինձ ոչ մի վիշա չպատճառեց, որովհետև ես միշտ մտածում էի իմ հայրենիքի մասին... Եթե ես հնարավորություն ունենամ լուսավորելու իմ աչքերն ու ծառայել իմ հայրենիքին, ապա ուրախ սրտով կրնթանամ դեպի ամեն կարգի ստրկություն և վտանգ»[1]։

Անգլիացի իր ծանոթներից մեկին՝ տիկին Մոնատագին 1757 թ. մայիսին գրած նամակում Էմինն ասում էր.

«Որչափ կյանքի նշույլ կա իմ մեջ, ես պետք է ամեն ջանք գործ դնեմ, որպեսզի ծառայեմ իմ հայրենիքին. և եթե ես կոչված եմ փրկելու իմ անպաշտպան ազգը, ապա ոչինչ չէ կարող արգելք հանդիսանալ ինձ»[2]։

Կալկաթայի կառավարիչ Դերեյքին Էմինը գրում էր.

«Որքան որ ես կապրեմ, պիտի ջանամ կյանքս ի սպաս դնել հայրենիքիս»[3]։

Նմանօրինակ հավաստիացումները, որոնք հաճախ կրկնվում են ինչպես նրա ինքնակենսագրական աշխատության, այնպես էլ նամակների մեջ, լիկ հայտարարություններ չէին։ Էմինի հարուստ, փոթորկալից կյանքն ու գործունեությունն ամբողջովին հաստատում են այդ։

Որպես քաղաքական գործիչ՝ Էմինն իրեն առաջադրում էր մի հիմնական խնդիր—կազմակերպել հայերի ազատագրական շարժումները, ապատա-

---

[1] „Life and Adventures of Ioseph Emin", էջ 58—60։
[2] Նույն տեղում, էջ 70։
[3] Նույն տեղում, էջ 101։

գրել հայ ժողովուրդը պարսկական ու թյուրքական բռնապետությունների ծանր լծից։ Ի տարբերություն Իսրայել Օրու, Էմինը դնում էր ոչ միայն Արևելյան Հայաստանի (Պարսկահայաստանի), այլև Արևմտյան Հայաստանի (Թյուրքահայաստանի) ազատագրության խնդիրը։ Այդ խնդրի իրագործումը նա հնարավոր էր համարում զինված ապստամբության միջոցով միայն։ Իր գործունեության սկզբնական շրջանում Էմինն արտաքին ուժերի օգնության հարց չէր դնում։ Նա կարծում էր, թե ներքին ուժերի միջոցով՝ միայն հայ-վրացական միացյալ ապստամբությամբ հնարավոր կլիներ տապալել տաճկական և պարսկական բռնապետությունների լուծը։ Այսօրինակ գործելակերպ առաջադրելով՝ ազատագրական այդ գործում նա առանձնապես մեծ տեղ էր տալիս վրաց Հերակլ II թագավորին։ Իր գործունեության վերջին շրջանում արդեն Էմինը նշմարեց այն ճշմարտությունը, որ տվյալ պատմական ժամանակաշրջանում, առանց Ռուսաստանի ակտիվ ռազմական օգնության, հնարավոր չէ հայ և վրաց ժողովուրդների ազատագրությունը սուլթանական և շահական տիրապետություններից։ Հայկական ազատագրական շարժման կենտրոնական ուժը նա համարում էր Ղարաբաղի (Խամսայի) մելիքությունները և այդ պատճառով էլ նա առանձնապես մեծ ճիգ ու ջանք էր գործ դնում այդ մելիքությունների դաշինքը կազմակերպելու վրա։ Ազատագրական շարժման հիմնական ուժերն, ըստ Էմինի, այդ՝ ժողովրդական մասսաներն են։ Նա լավ էր հասկանում, որ հայ կղերականությունը դեմ է ազատագրական շարժումներին և այդ հանգամանքը քանիցս հիշատակում է ինչպես իր ինքնակենսագրության, այնպես էլ իր ծանոթներին ու բարեկամներին գրած նամակներում։

Անհամեմատ խոշոր դեմք է Էմինը որպես նոր, եվրոպական առաջավոր ու դեմոկրատական գաղափարների ներկայացուցիչ, որպես այդ գաղափարների քարոզիչ՝ հայ իրականության մեջ։ Ամենայն իրավամբ Էմինը պետք է համարվի հայ հասարակական մտքի նոր՝ բուրժուա-դեմոկրատական, հակաֆեոդալական էտապի առաջին նշանավոր ներկայացուցիչը։ Մինչև Էմինը հայ իրականությունը չի տվել նմանօրինակ գաղափարների որևէ քարոզիչ և նա, իրապես, հայ լուսավորիչների սերունդների առաջին ներկայացուցիչն է։

Էմինը, ինչպես այդ հատուկ է ընդհանրապես բոլոր լուսավորիչներին, պատմական պրոցեսի, հասարակական կյանքի հիմնական շարժիչ ուժը համարում է գիտությունը, լուսավորությունը։ Այդ միտքը նա կրկնում է շատ անգամ։ Հերակլին ուղղած իր նամակում նա գրում էր.

«Այստեղ (Եվրոպայում—Մ. Ն.) ամեն ինչ արվեստով և գիտությամբ է ընթանում։ Այն ազգը, որը գիտություն չունի, նա ազգություն չէ, և նրանք, ովքեր անտեսում են այս, կույր են և դժբախտ։ Հին հռոմայեցիներն օրենքներ տվին մարդկությանը և նվաճեցին աշխարհիս բոլոր ազգությունները՝ շնորհիվ արվեստի և իմաստության։ Ռուսաստանի հանգուցյալ փառապանծ Պետրոս Մեծը չէր կարող լինել այնքան մեծ պատերազմող և չէր կարող իր երկիրն այնքան զարգացնել, եթե չգար այս վայրերը (այսինքն՝ Եվրոպա—Մ. Ն.) գիտություն սովորելու... Կան այնպիսի բաներ, որոնց շնորհիվ եվրոպական ազգությունները հաղթող հանդիսացան... Նրանց

մեջ կան գիտնականները, որոնք կատարում են մեծամեծ և հրաշալի գործեր... Նրանք հսկայական ծախսերով ուղարկում են մարդկանց աշխարհի բոլոր կողմերը՝ ուսումնասիրելու բոլոր այն բաները, որոնք արտադրվում են երկրի վրա կամ գտնվում են նրա ընդերքում... Նրանց քաղաքները շատ մեծ են, նրանց ժողովուրդը երջանիկ է... Նրանք կառավարվում են հրաշալի օրենքներով... Թող բարձրյալն աստված ձեր հպատակներին իմաստություն շնորհե հետևելու նրանց օրինակին»[1]։

Այդ նույն և այլ նամակներում Էմինը հաճախ կրկնում է այն միտքը, թե «Ինչ որ հիմնված չէ գիտության վրա... ավազի վրա է կառուցված»։ Հերակլի հետ ունեցած իր տեսակցությունների ժամանակ (1763 թվին) Էմինը, պետությունը հզորացնելու համար, որպես հիմնական միջոցառում առաջարկում էր դպրոցներ բաց անել, պատանեկությանը գիտություն, զինվորական արվեստ սովորեցնել։ Առանց գիտության, լուսավորության, առանց զինվորական արվեստի ոչ մի պետություն հզոր լինել չի կարող—ասում էր նա։

Իր ժամանակի եվրոպական շատ լուսավորիչների նման՝ Էմինը գերագույն ելակետը համարում է «բնության օրենքը»։ Նա գրում է.

«Որևէ օրենք կամ սովորություն, որ դեմ է բնության օրենքին, ավերակի կվերածի քաղաքները, կամայացնի պետությունները և ոչ մի հետք չի թողնի բացի անապատից, և այնքան ամայի, որ, կարծեք թե, երբեք մարդկային բնակություն չի եղել այնտեղ»[2]։

Էմինը խիստ ոգևորված էր անգլիական կարգերով։ Անգլիայի ռեսպուբլիկական կարգերը նա կատարյալ էր համարում։ Անգլիայի մասին խոսելիս՝ նա ասում է, թե այնտեղ կարելի է տեսնել «իմաստուն օրենքների և օգտակար կարգ ու կանոնների եվրոպական սքանչելի սիստեմը»։ Էմինը լայն պրոպագանդա էր ծավալում, որպեսզի Հայաստանում ու Վրաստանում ևս ստեղծեին եվրոպական այդ կարգերը։

Էմինը խիստ բացասական դնահատական էր տալիս ազնվականության, կղերականության և վաճառականության։ Վրացական ազնվականության մասին խոսելիս՝ նա մռայլ գույներով էր պատկերացնում նրա դերը վրաց ժողովրդի պատմության մեջ, նրա շահատակություններն ու ճնշումները գյուղացիական մասսաների նկատմամբ, նրա դավաճանական գործելակերպը երկրի նկատմամբ և այլն։ Հայ կղերականության մասին նա հետևյալ մտորումներն էր անում.

«Հասարակ մարդու նկատմամբ շունն ավելի մարդասիրություն ունի, քան եկեղեցական հայրերը, որոնք թյուրքական իշխանության գլխավոր փաստաբաններն են։ Նրանք գիշեր ու ցերեկ աղոթում են, որ մահմեդականների իշխանությունը երկարաձգվի... Խոցված սրտով հաճախ լսել եմ նրանց անեծքն իրենց սեփական հասցեին և գովասանքը՝ իշխող գիշատիչ գայլերի մասին։ Այս տեսակ անխիղճ «բարեկամներով» ինչպես կարող է ժողովուրդն

[1] „Life and Adventures of Ioseph Emin", էջ 110, 111։
[2] Նույն տեղում, էջ 396։

ազատվել ստրկությունից, բացի միայն այն դեպքից, երբ ժողովուրդը հրաժարվի զրամ հավաքել եկեղեցականների համար։ Եթե ժողովուրդն այդ դրամի մեկ քառորդ մասն անգամ ծախսե յուր երեխաների վրա՝ նրանց պատշաճ կրթություն տալու համար, այդ դեպքում հնարավոր է դանդաղանել բանական էակը բիրտ կենդանուց, բազմացնել լավ տունկերը և դուրս շպրտել ֆնասակար խոտերը։ Այսպես միայն կստեղծվի ազատ ժողովուրդ»[1]։

Էմինը հոգևորականներին գառնալգեստ գայլեր է անվանում և ցավով հիշատակում է, թե ինչպես իր հայրենակիցները «երեխաների նման խաբվում են իրենց եկեղեցու «սուրբ հայրերի» կողմից»։ Էմինի մոտ խիստ բացասական դնահատականի են արժանանում նաև հայ վաճառականները։ Խոսելով Լազարյանների ժլատության մասին, Էմինը գրում է.

«Եթե հայ վաճառականներն ունենան այն սիրո կեսն ազատության համար, ինչ որ նրանք ունեն դրամի և նախապաշարումների համար, որոնք շատ տեսակետից կործանարար են, վաղուց ազատագրված կլինեին։ Սակայն այդ նողկալի նախապաշարումն այնքան տիրապետող է դարձել նրանց մոտ, այնքան է ներթափանցել նրանց հոգու խորքը, ներհոսելով յուրաքանչյուր մկանի ու արյան անոթի մեջ, այնքան է շաղախվել նրանց արյան ու բնավորության հետ, որ, հիրավի, նրանք արժանի են ավելի շուտ հասարակության կարեկցությանը, քան թե մեղադրանքին»[2]։

Այդ նույն հարցի մասին մի այլ կապակցությամբ Էմինը իր ինքնակենսագրականում ասում է.

«Էմինը... յուր հայրենիքը փրկելու հուսով քանի՞-քանի անգամ վտանգել է իր կյանքը։ Բայց, ափսոս, դրանք ապարդյուն անցան, որովհետև մի կողմից հարուստները միայն ամուր գրկել էին իրենց դրամի քսակները, մատեցնելով դրանք, որքան հնարավոր է, իրենց թշվառական սրտերին, իսկ մյուս կողմից՝ եկեղեցու կես աստվածները մեռցրել էին ազատության հավատքը»[3]։

Էմինը խիստ կսկիծով է խոսում արևելքի կնոջ ծանր վիճակի մասին։ Նա ասում է.

«Դեղեցիկ սեռի հանդեպ ասիացիների վերաբերմունքն ուրիշ ոչ մի բանի հետ չի կարելի համեմատել, քան միայն դիվային վերաբերմունքի»[4]։

Բազմակնությունը, որ թույլատրվում է օրենքով, ըստ Էմինի՝ չարիքների և կնոջ ստրկական վիճակի աղբյուրն է հանդիսանում։

Էմինի լուսավորական-դեմոկրատական հայացքները, սակայն, ազատ չեն կրոնական իդեոլոգիայի ազդեցությունից։ Նա աթեիստ չէր, իհարկե, և իր լուսավորական, առաջավոր գաղափարները շատ հաճախ հիմնավորում էր

[1] Նույն տեղում, էջ 157։
[2] Նույն տեղում, էջ 198։
[3] Նույն տեղում, էջ 320։
[4] Նույն տեղում, էջ 396։

կրոնական փաստարկումներով, մի բան, որ հատուկ էր նաև 18-րդ դարի եվրոպական լուսավորիչների մի մասին։

Էմինի մասին հիացմունքով են խոսում նրան ծանոթ ժամանակակիցները։ 1757 թվի դեկտեմբերի 14-ին կոմս Բենտինքին ուղղած իր նամակում Ս. Ս. Էգերարն Էմինի մասին գրում էր.

«Ազգությամբ հայ է նա, հայրը վաճառական է Կալկաթայում։ Տեսնելով կրոնական արդյունաբերության գերազանցությունը նավային և զինագործության ասպարեզում՝ նա համոզվում է, թե հնարավոր է, որ ինքն էլ սովորև դրանցից այնպիսի մի արվեստ, որով կարողանա ազատել կամ առնվազն ծաղկեցնել իր հարազատ ժողովուրդը։ Այս հիանալի ծրագիրը մինչև այժմ հետապնդել է բացառիկ հաստատակամությամբ և հաջողությամբ։ Այժմ նա գնում է Հոլլանդիա՝ այցելելու իր հայրենակիցներին... Ցանկանում եմ ներկայացնել ձեզ մի մարդու, որը շնորհիվ իր արտակարգ բնավորության և փորձված արժանիքների՝ մեծ մարդկանց ուշադրության առարկա դարձավ Անգլիայում»[1]։

Էմինին անձամբ ծանոթ տիկին Մոնտագն իր նամակներից մեկում նրա մասին գրում էր.

«Այս սքանչելի մարդու համար պետք է վերապահված լիներ ավելի փառավոր աթոռ, քան պարսկական դահը։ Նա ծնվել է ստրկության մեջ և սնվել է տգիտության մեջ, սակայն տենչում է ազատություն, գիտություն և կուլտուրականություն տալ իր հայրենակիցներին։ Այս բոլորն իրագործելու համար նա վտանգի ենթարկեց իր կյանքը, կրեց մեծագույն առապանքներ և նետվեց ամեն տեսակ վտանգների մեջ, այնպիսի մի երկրում, որի լեզուն անգամ անծանոթ է նրա համար»[2]։

Էմինի մասին ոգեորությամբ ու հիացմունքով է խոսում նաև անգլիական հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Էդմոնդ Բըրքը, որն Էմինի մոտիկ ծանոթներից մեկն էր և նամակագրություն ուներ նրա հետ։

Էմինի գաղափարական ազդեցությունը խիստ նկատելի է հայ լուսավորիչների հնգկահայ սերնդի հետագա ներկայացուցիչների վրա։ Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի և անդամ Մեսրոպ Թաղիադյանի մոտ կրկնվում են Էմինի շատ մտքերը՝ գրեթե նույնությամբ։

Մեր գրականության մեջ փորձեր են եղել Էմինին պատկերացնել որպես արկածախնդիր, բախտ որոնող գործիչ (տես, օրինակ՝ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի «Պատմութիւն Աղուանից» աշխատությունը, Լեոի «Հայոց պատմութիւն», նորագույն շրջան, ապակետիպ)։ Այսօրինակ տեսակետին հանդիպելը զարմանալի չէ։ Հայ կղերական ու բուրժուական պատմագրության սիստեմը և տրադիցիան է եղել ընդհանրապես — ստվեր գցել, սև գիծ քաշել հայ ազատագրական շարժման, հասարակական մտքի լավագույն ներկայացուցիչների վրա, ներկայացուցիչներ, որոնք խիզախել են պայքարի դրոշ բարձրացնել հայկական խավարամտության և նրա ամրոցը հան-

[1] „Life and Adventures of Ioseph Emin", էջ 89։
[2] Նույն տեղում, էջ 85։

դիսացող Էջմիածնի կաթողիկոսության դեմ։ Հայ բուրժուական պատմագրությունը մոռացության է մատնել Էմինին։ Մարքսիստական մեր պատմագրության կարևոր խնդիրներից մեկը պետք է լինի, ընդհակառակը, հանդամանորեն լուսաբանել հայ հասարակական մտքի և պատմագրական շարժման այդ փայլուն ներկայացուցչի կյանքը և լայն մասսաների սեփականությունը դարձնել այն։

ИОСИФ ЭМИН

(РЕЗЮМЕ)

Изучение жизни и деятельности виднейшего армянского общественно-политического деятеля XVIII столетия Иосифа Эмина привело нас к следующим выводам:

1. Антифеодальная, буржуазно-демократическая идеология в армянской действительности зародилась в 50-х годах XVIII века под влиянием западно-европейской, главным образом, английской передовой мысли того времени. Первым представителем этой армянской просветительской идеологии был Иосиф Эмин (1726—1809). С него начинается этап буржуазно-демократических, просветительских идей в истории развития армянской общественной мысли. Поэтому надо признать ошибочной господствующую до сего времени как в нашей историографии, так и в литературоведении и остающуюся пока без возражений точку зрения, что армянская просветительская буржуазно-демократическая идеология будто возникла лишь в первой половине XIX века.

2. Армянская просветительская идеология второй половины XVIII века имеет ярко выраженный характер политической, революционной борьбы. В этот период первоочередным вопросом являлось освобождение армянского народа от персидского и турецкого ига путем вооруженного восстания. Это обстоятельство наложило глубокий отпечаток на армянское просветительство. Именно поэтому Иосиф Эмин, как и другие армянские просветители второй половины XVIII века (Мовсес Баграмян, Шагамир Шагамирян и др.), являлся не только просветителем, но и крупным деятелем освободительного движения.

3. Иосиф Эмин оказал огромное влияние на ряд представителей старшего поколения армянских просветителей. Так, например, множество идей Эмина почти без изменения можно найти у Мовсеса Баграмяна, Шагамира Шагамиряна и даже у армянского просветителя первой половины XIX века Месропа Тагиадяна. Армянская политическая группа в Мадрасе (Шагамирян, Ходжаджанян, Баграмян и др.), проявившая в 1770—1790 г. г. большую работу в деле организации армянского освободительного движения, была создана при активном

участии Эмина и под влиянием его идейной и политической деятельности.

4. Эмин был самым ярым поборником политического союза, братского единения армянского и грузинского народов в XVIII веке. Одной из основных целей его политической деятельности было установление прочного братского союза между этими народами, связанными общностью исторической судьбы, для совместной борьбы за их освобождение от персидского и турецкого ига.

5. Роль Эмина чрезвычайно велика как в истории развития армянской общественной мысли, так и в истории освободительного движения армянского народа.

М. Нерсисян